ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԾԱՂԿՈՒՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հասցե՝ Ծաղկունքի գյուղապետարան
հեռախոս 4 – 74 – 88
«09» 11 2011 թվական թիվ 163

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Կից ներկայացնում ենք Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 13 նիստի որոշումները:

«Առղրի » 6 թերթ

Ծաղկունք համայնքի
ղեկավար Գ Կարապետյան

ԾԱՂԿՈՒՆՔ
04703684

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 10654-11
«09» 11 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ

8-ը Նոյեմբերի 2011 թվականի N1

# ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով համայնքի ավագանին

## ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել Արմավիրի մարզի Ծաղկունքի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 7-ի N13 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

Գ. Կարապետյան
Բ. Ալեքսանյան
Ս. Վարդանյան
Վ .Եղիազարյան
Հ. Երանոսյան

Համայնքի ղեկավար՝ Գ Կարապետյան

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկունք գյուղական համայնքի ավագանու 2011
թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1 որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

## ԹԻՎ 13 ՆԻՍՏԻ

1. ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ
2. 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3 ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ

8-ը Նոյեմբերիի 2011 թվականի N 2-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական Տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածներով հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՈՐՈՇԵՑ

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք գյուղական համայնքի 2012 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի

Ավագանու անդամներ՝ Գ. Կարապետյան
Ք. Ալեքսանյան
Ս. Վարդանյան
Վ. Եղիազարյան
Յ. Երանոսյան

Համայնքի ղեկավար՝ Դ Կարապետյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Ծաղկունք գյուղական համայնքի
ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 8-ի
թիվ 13 նիստի N 2-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, նոր շենքերի շինությունների ( ներառյալ ոչ հիմնական ) շինարարության ( տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանում է`

հիմնական օբյեկտների համար

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար` յուրաքանչյուրը 15.0 հազ / տաս հազար / դրամ :
Սույն կետով չնախատեսված օբյեկտների համար 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերաս ունեցող օբյեկտների համար`մինչև 25.0հազ/քսանհինգ հազար/ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար. եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետական նախագծով

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական փոփոխություն յուրաքանչյուրը 3.0 հազ / երեք հազար / դրամ:

3. Համայնքի վարչական տարածում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուրը 5.0 հազ. / հինգ հազար/ դրամ

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է `

1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինություններ ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար յուրաքանչյուրը 5.0հազ /հինգ հազար/ դրամ :

2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինություններ ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար յուրաքանչյուրը 5.0 հազ/ հինգ հազար / դրամ :

5. Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների հեղուկացված գազերի, վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 170.0 հազ / հարյուր յոթանասուն հազր / դրամ

6. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝2.0հազ. / երկու հազար/ դրամ.
8. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 5.0 հազ./ հինգ հազար / դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ

8-ը նոյեմբերի 2011 թվականի N 3

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1 – ին մասի 5-րդ կետով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

## ՈՐՈՇԵՑ՝

1. Նոյեմբերի 24-ին Լոս - Անջելոսում տեղի ունենալիք հերթական «Հեռուստա-մարաթոն – 2011» ծրագրի համար տալ դրամական օգնություն 30.0 հազ /երեսուն հազար / դրամ՝ ԼՂՀ-ի և Հայաստանի Հանրապետությոն գյուղերի զարգացման ծրագրերի համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

Գ. Կարապետյան
Բ. Ալեքսանյան
Ս. Վարդանյան
Վ. Եղիազարյան
Հ. Երանոսյան

Համայնքի ղեկավար՝ Դ. Կարապետյան

04703684